ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2019թ. թիվ 398-Ա

«ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգը հաստատելու մասին» թիվ 440-Ն որոշմամբ և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի 2019 թվականի մայիսի 15-ի թիվ 345-Ա որոշման հիման վրա համակարգչում նախօրոք զետեղված և համակարգչի կողմից պատահական ընտրված 7 թեկնածուների ցուցակը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող՝ հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 12.06.2019թ. ժամը 11.00-ին մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հանձնաժողովի անդամներից հանձնաժողովի նախագահ նշանակել Արթուր Մխիթարյանին, հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Վարդանյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հունիսի 11
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2019թ. հունիսի 11-ի
թիվ 398-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի

Կ Ա Զ Մ

Արթուր Մխիթարյան	- առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժ/պ
Արմեն Ջանազյան	- քաղաքաշինության վարչության պետ
Դավիթ Մանուչարյան	- ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ
Հասմիկ Մկրտչյան	- զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ
Լուսինե Վարդանյան	- առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
Արտավազդ Բեջանյան	- ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ
Ռուբեն Խանզադյան	- ՀՀ Լոռու մարզպետի օգնական

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Invalid signature

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ